

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

17.08.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Կ գնման պայմանագրի

ք. Երևան

30.01.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշումը և ՀՀ թվով 7 համայնքներում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 17.08.2023թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Կ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2025 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝


ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Կ/Կ 900011047363, 900011047355, 900011047306,
900011047314, 900011047322, 900011047256,
900011047264
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝

«Նորաշեն» ՆՏ ԱԿ
ք.Երևան, Հալաբյան փող. 11-36
«Յունիբանկ» ԲԲԸ
Կ/Կ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝



Բաղդասարյան

Կ.Տ.

